

# Հուշարձանների պահպանություն և բարեկարգում

Ներկայումս Շուշիի պատմամշակութային ժառանգությունը վտանգված է: Ավերված և անպաշտպան ճարտարապետական հուշարձաններին սպառնում են թե՛ բնական ազդեցությունը և թե՛ մարդկային չկանոնակարգված գործունեությունը: Անհրաժեշտ է նշել նաև, որ քաղաքում իրականացվում են մի շարք շինարարական աշխատանքներ, օրինակ՝ բերդապարսպի անմիջական հարևանությամբ, որոնք հակասում են քաղաքի զարգացման հայեցակարգին և անհարիր են քաղաքի պատմական դիմագծին:

Ելնելով այս տագնապալի իրողությունից՝ Հիմնադրամը ԼՂՀ կառավարության համաձայնությամբ ստանձնել է քաղաքի 10 խոշորագույն պատմական շինությունների պահպանման գործը:

Ի լրումն, ԼՂՀ իշխանությունների հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել՝ մինչ Շուշիի «քաղաք-արգելոց» կարգավիճակի հաստատումը դադարեցնել շինարարական աշխատանքների թույլտվությունները:

Շուշիի պատմաճարտարապետական արժեք հանդիսացող շինությունների ուսումնասիրման, գնահատման, չափագրման և այլ աշխատանքների իրականացման նպատակով Հիմնադրամը ճարտարապետների պարբերական հոսք է ապահովում դեպի Շուշի և կազմակերպում տարբեր քննարկումներ և աշխատանքային խմբեր ինչպես տեղում, այնպես էլ Երևանում:

Ներկայումս Հիմնադրամն իրականացնում է նաև Շուշիի պատմամշակութային ժառանգության և բնակելի ֆոնդի ամբողջական գույքագրում, ֆունկցիոնալ գոտիավորում և ռեժիմավորում: Ծրագիրը կշարունակվի նաև 2008թ. ընթացքում:

